

Եւ սակայն հայ աշխատաւորութիւնը ամենուրեք կը դերադասէ մտնել Հ. Յ. Դաշնակցութեան շարքերուն մէջ եւ անոր միջոցով փնտոել իր քաղաքական ձգտումներուն իրականացումը:

Ասիկա պատմական փաստ մըն է, որ ինքնին պերճախօս է եւ զոր անկարելի է վերագրել պատահականութեան կամ հայ զանգուածներու քաղաքական տգիտութեան:

Պատահականութիւններ կրնան լինիլ անհատական դէպքերու ատեն, բայց ոչ երբեք զանդուածային, մասսայական երեւոյթներու մէջ: Իսկ քաղաքական տգիտութիւնը նոյնպէս կը վերաբերուի աւելի անհատներուն, քան զանդուածներուն. որովհետեւ անհատը կրնայ թիւրիմացութեամբ, իր քաղաքական տգիտութեան պատճառով, յարիլ այս կամ այն քաղաքական կուսակցութեան, բայց երբեք զանգուածները, որոնք բնազդօրէն միշտ կը մղուին հոն, ուր իրենց շահն ու ողջմտութիւնը կը պահանջեն. եւ չեն սխալիր: Եթէ զանգուածներուն յաճախ կը պահսի քաղաքական գիտակցութիւնը, երբեք չի պահսիր սակայն քաղաքական ողջմտութիւնը, որ յամենայն դէպս անհամեմատ աւելի նուազ սայթաքումներ կ'ընէ, քան «քաղաքական գիտակցութիւն» բռուածը:

Առհասարակ պէտք է ըսել, թէ մեր մէջ սովորաբար կը չափազանցուի գիտակցութեան նշանակութիւնը հանրային կեանքի ու պայքարներու մէջ եւ ծայր աստիճան կը ստորադնահատուի այն տիրական դերը, զոր կը կատարեն մասսաներու առողջ բնազդն ու չգիտակցուած շահերը: Ասոնք է որ առաջ կը բերեն այն յաճախ անբարոյնի ու անսպասելի հասարակական երեւոյթները, որոնք տարբերային բնոյթ կը կրեն:

Դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը կը մղուի հայ ժողովուրդը ամէն տեղ, կարելի է ըսել, տարբերայնօրէն: Որովհետեւ ամէն մէկ հայ, որ այլասերուած չէ, Հ. Յ. Դաշնակցութեան մէջ կը գտնէ գիտակցօրէն թէ անգիտակցօրէն մարմնացումը պատմական այն մեծ առաքելութեան, որ կը բխի հայութեան անցելէն ու ներկայէն եւ որ հարազատ է ու համապատասխան անոր հողիին ամենէն կենսական, ամենէն հրամայական պահանջին: Իսկ այդ

պահանջը ոչ այլ ինչ է, բայց եթէ հայ ազգի հաւաքումը, միութիւնը, պաշտպանութիւնը եւ ազատութիւնը:

Ուրեմն, ոչ թէ ընկերվարական եւ դասակարգային խախտներն են, որ Հ. Յ. Դաշնակցութեան կենսունակութեան եւ յաջողութեան աղբիւրը կազմեր են ու կը կազմեն, այլ գերազանցապէս ազգային միութեան, պաշտպանութեան եւ վերածնութեան մղումները:

Իր ոգիով, իր աւանդութիւններով, իր զանգուածներու տիրող զգացումներով ու ձգտումներով եւ վերջապէս իր կատարած պատմական ու քաղաքական գործով Հ. Յ. Դաշնակցութիւնը եղեր է եւ է գերազանցապէս ազգային կուսակցութիւն:

VI

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Քաղաքական, ընկերային, տնտեսական, ազգային խնդիրներով զբաղուող հայ մտաւորականութեան շարքերուն մէջ ծայր է տուած ժամանակէ մը ի վեր վերազնահաստման ուժեղ շարժում մը, որ, թէեւ կազմակերպուած բընոյթ չունի, սակայն անտարակոյս աննախընթաց է իր խորութեամբ, ծաւալով եւ, եթէ կ'ուզէք, իր տարբերայնութեամբ:

Կը վերազնահաստուին քաղաքական օրինակացիաներ, կը վերազնահաստուին ընկերային գաղափարներ, նշանաբաններ, սկզբունքներ, աշխարհահայեցողութիւններ: Ամենուրեք կը տիրէ տարակուսանք, նահանջի, ժխտումի տարտամ մտայնութիւն, քննադատութեան բուռն պահանջ: Քաղաքական կեանքի ամենէն աջ տարրերէն սկսած մինչեւ ամենէն ձախերը եւ ծայրայեղները հրատարակ կը հանեն աներկբայելի ձգտում մը՝ աւելի վերապահ ու քննական վերաբերում մը ցոյց տալու հանդէպ հասարակական այն գաղափարներուն, որոնք տասնեակ տարիներ գերած են առաջաւոր եւ պայքարող հայութեան միտքն ու զգացումները:

Քաղաքական ներքին թէ արտաքին այլեւայլ նկատումներ դժբախտաբար պատճառ կը դառնան, որ կուսակցական վարադոյներու ետեւ ծածկուին նոր ուղիներ որոնող հայ քաղաքական մտքի տատանումները, ղեկերում-